

ԼՈՒՐԵՐ ԳՈՍԹԱ ՄԵՍԱՅԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻԷՆ

Մեծ Պահքի առաջին օրն է Երկուշաբթի, Փետրուար 15: Յաջորդող Կիրակի օրերուն Արեւագալի երգեցողութիւնը պիտի կատարուի Յովսէփեան եւ Ջուարթնոց Երգչախումբերու մասնակցութեամբ: Իսկ Փետրուար 18էն սկսեալ ամէն Հինգշաբթի երեկոյեան ժամը 7:00ին Հսկումի արարողութիւն տեղի պիտի ունենայ, ապա ժամը 8:00ին Պահքի ընթրիք պիտի սպասարկուի: Սուրբ Աստուածածին Հայց. Եկեղեցւոյ գրասենեակի հեռաձայնի թիւն է (949) 650-8367:

ՀՍԿՈՒՄԻ ԵՒ ԸՆԹՐԻՔԻ ՕՐԵՐ

Փետրուար 18

Ընթրիքը կը կազմակերպէ Երիտասարդաց Միութիւնը (ACYO Sr. and Jr.).

Փետրուար 25

Ընթրիքը կը կազմակերպէ Յովսէփեան Երգչախումբը:

Մարտ 4

Ընթրիքը կը կազմակերպէ Կիրակնօրեայ Դպրոցը:

Մարտ 11

ՄԻԶԻՆՔ - Հսկումին պիտի հանդիսապետէ Առաջնորդ Սրբազան Հայրը, իսկ ընթրիքը պիտի կազմակերպէ Եկեղեցւոյ Տիկնանց Միութիւնը:

Մարտ 18

Ընթրիքը կը կազմակերպէ Ջուարթնոց Երգչախումբը:

Մարտ 25

Ընթրիքը կը կազմակերպէ Մշակութային Յանձնախումբը:

Ապրիլ 1 - ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ-ԽԱՒԱՐՈՒՄ: Ընթրիքը կը կազմակերպէ Տիկնանց Միութիւնը: